

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ԱՅՑՅԵԼՈՒՆԵՐԸ

Հանրապետության նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երկն ընդունեց Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէն և անոր հետ քննարկեց Ֆրանսայի Երկրի մասին Կապույտ Կուսակցության Հոկտեմբեր 2001ին Լիբանանի մէջ գումարուելիք գերատիճանին նախապատրաստութիւնները, ինչպէս նաեւ այդ առիթով տեղի ունենալիք մշակութային, տնտեսական եւ գիտական բնոյթ ունեցող ձեռնարկներուն կապուած հարցեր:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան նաեւ երկկողմանի յարաբերութիւններն ու Լիբանանին օժանդակելու ֆրանսական ծրագիրը, որ պատրաստուած է երկու երկիրներու պետական պատասխանատուներու խորհրդակցութիւններուն հիմամբ:

Հանդիպումին ընթացքին խօսուեցաւ շրջանային վարգացումներուն, ինչպէս նաեւ Բարաք Էլի կողմէ Լիբանանի օդային, ծովային եւ ցամաքային սահմաններու բնաբարումին եւ այս գծով ՄԱԿի ներկայացուած լիբանանեան բողոքներուն, ինչպէս նաեւ Լիբանանին ուղղուած իրաւաբանական սպառնալիքներուն մասին:

Նախագահ Լահուտ երկն նաեւ ընդունեց Իտալիոյ դեսպան Ճիուլիոյէ Քասիմին, որ յայտնեց, թէ Իտալիոյ արտաքին գործոց նախարար Լամպերթո Տիւի Նոյեմբեր 22ին պիտի այցելէ Պէյրութ: Լիբանան ու Սուրիան ընդգրկող իր այդ շրջապատյալին ընթացքին Տիւի պիտի քննարկէ շրջանային իրավիճակը եւ երկկողմանի յարաբերութիւններու վարգացումը:

ԱՆԹՈՒԱՆ ՇԱՄՈՒՆ Կ'ԱԶԴԱՐԱՐԷ

Բնակեցման պետական հաստատութեան վարչ խորհուրդի նախագահ եւ ընդհանուր տնօրէն Անուան Շամուն երկն «վերջին ազդարարութիւն» ուղղեց «բնակեցման սնտուկ»էն փոխառութիւն կատարած այն քաղաքացիներուն, որոնք երեք կամ աւելի յաջորդական մասնավճարներ չեն կատարած եւ անոնցմէ պահանջեց փութալ կատարելու ուշացած վճարումները:

«Հաստատութիւնը ամէն առիթ տուաւ անոնց, որպէսզի հարցը այս հանգրուանին չհասնի, բայց այսուհետեւ ստիպուած պիտի ըլլան դիմելու օրինական միջոցառումներուն, եթէ պարտատէրերը այս ապարարութիւնէն անմիջապէս ետք շարունակեն նոյն ընթացքը», ըսաւ ան, զգուշացնելով, որ այլապէս պիտի դիմէ օրինական միջոցներուն, այսինքն՝ բնակարան բռնագրաւելու եւ աճուրդի հանելու:

ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ ՆԱԽԱԳԱՀՆԵԼԷ ԵՏՔ

ՆԱԽԱՐԱՐ ԷԼԻԱՍ ՍԵՐ ԱՅՑՅԵԼԵՑ ԿԱՐԶԱՊԵՏ ԸԱՐԻՐԻԻ

Ներքին գործոց նախարար Էլիաս Սեր երկն այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ անոր հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնն ու հարաւի մէջ տիրող վիճակը:

Այս հանդիպումէն առաջ Սեր նախագահած էր Ապահովու-

թեան Կեդրոնական խորհուրդի ժողովին, ապա ընդգծեց անընդհատ շարունակուող յարգելու այն օրէնքները, Շար.ը՝ էջ 10

ՆԵՐԿԱՅ ԶԱՆԳՐՈՒՄՆԻՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ Է ԱՍՈՒՐ ՊԱՅՏԵԼ ՆԵՐՔԻՆ ԸԱԿԱՍԸ

Պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաւի երկն յայտարարեց, որ ներկայ հանգրուանին անընդհատ է անուր պահել Լիբանանի ներքին գործերը, ինչ-

րաւելու համար իսրայէլեան դաւերը: «Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաթի սպառնալիքը կը վերահաստատէ Բարաք Էլի Լիբանանի ներքին ճակատը, ինչ-

պէս նաեւ կը բացայայտէ անոր ճիգը՝ որ եւ պատրուակով Լիբանանի դէմ նոր վարչապետութիւններ գործելու»: ըսաւ ան:

Պաշտպանութեան նախարարը նկատել տուաւ, որ Լիբանանի գերիշխանութիւնը կը շարունակուի ոտնահարուիլ Իսրայէլի կողմէ, որոնց վերջինը՝ Լիբանանի սահմաններէն ներս ուղղաթիւներու թռիչքը եւ լիբանանեան հողի վրայ էջք կատարելն է: Այս ոտնձգութիւններուն կու գահեժ Լիբանանի ուղղուած Շար.ը՝ էջ 3

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՍԿԱՍԸ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ԻՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկն նկատել տուաւ, որ կառավարութիւնը «բաց երկինքի քաղաքականութիւն» որդեգրելով կ'ուղղէ պատգամը, թէ անմիջապէս սկսած է խորհրդարանին ներկայացուած իր յայտարարութեան գործադրութեան: «Կառավարութիւնը յանձնառու է գործադրելու այդ ծրագիրը եւ յատուկ լրջութեամբ պիտի աշխատի կարելի եղած արագութեամբ վերստին շարժումի մէջ դնելու ազգային տնտեսութիւնը իր բոլոր բնագաւառներով», ըսաւ Հարիրի:

Շար.ը՝ էջ 3

ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ԺԵՄԱՅԵԼ ԱՅՑՅԵԼԵՑ ՈՒԱԼԻՏ ԺՈՍՊԼԱԹԻ

Երեսփոխան Փիեռ Ամին Ժեմայէլ երկն այցելեց Ընկերվար Յառաջդիմական Կոնսակցութեան ղեկավար Երեսփոխան Ռալֆ Ժոմայաթի, ապա յայտարարեց, որ այս այցելութիւնը կու տայ հաստատելու, թէ ապա տութիւնները հիմնահարց են եւ Լիբանանի գոյութեան կարեւորագոյն երաշխիքներէն:

«Բոլոր հարցերը պէտք է արծարծուին քաջաբար, բայց նաեւ հասկացողութեամբ, որպէսզի սկսի բոլոր կողմերը համախմբող երկխօսութիւն մը», ըսաւ Ժեմայէլ, աւելցրնելով, որ Ժոմայաթի արծարծած բոլոր հարցերը պէտք է դառնան երկխօսութեան նիւթ, որպէսզի կարելի դառնայ անոնց լուծումը:



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կիրակի, 12 Նոյեմբեր 2000ին, հանգուցեալ բարերար ՄԻՀՐԱՆ ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆԻ իր ընտանիքի (ԶԱՊԷԼ, ԼԵՅԼԱ եւ ՀԱՌԻԸՐՏ) յիշատակին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ հանդիսատար սուրբ եւ անմահ պատարագ եւ պաշտօնական հոգեհանգիստ:

Արարողութեան պիտի մասնագահէ եւ անուր պատշաճի քարոզէ՝

ԳԵՐԾ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՅՑՅՈՑ ԹԵՄԻՆ

Սկիզբ ժամերգութեան	Ժամը 7:30ին
Պատարագ	Ժամը 9:30ին
Զարոգ	Ժամը 10:30ին
Հոգեհանգիստ	Ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուին մեր բարեպաշտ ժողովուրդը՝ Անրկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան:

ԹԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՆՇԱՆ, ՄԱՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳՐԱԲՈՒԾ ՕՐ

ԾԵՐԱՆՈՅ
ՏԻԿՆԱՆՅ
ՕԺԱՆԴԱԿԻ
ՆԱԽԱՃԱՇ
6 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ը. Յ. Դ. ԲՐԻՍՏԱՓՈՐ ԿՈՄԻՏԵՆՈՒԹԵԱՆ 75ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Ը. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն՝ ԲՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՔԱՆԳԱԿԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Բանախօս՝ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 12 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 6:00ին, Շամազգայինի Նշան Փալանճեան ճեմարանի շրջափակէն ներս:

ԸՐԱԲԵՐ

ՊՈՒԹՐՈՍ ՅԱՐՊ ԿՐ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԺՈՍՊԼԱԹԻ ԴԵՍ ՇՂԹԱՅԱԶԵՐԾՈՒԱԾ ԱՐՇԱԲԸ

Երեսփոխան Պուրոս Հարպ երկն դատապարտեց Երեսփոխան Ռալֆ Ժոմայաթի դէմ շղթայապէրծուած արշար:

Մարոնիներու Սֆէյր պատրիարքին հետ տեսակցելէ ետք կատարած իր յայտարարութեան մէջ, Հարպ ըսաւ, որ քննարկած են վերջին վարգացումները՝ խորհրդարանի քննարկումներուն յոյսին տակ, մանաւանդ որ խորհրդարանի նիստերուն ընթացքին յայտարարուած կեցուածքներէն ու մանր կ'ամրապնդէ ժողովրդավարական վարչաձեւը, մինչ ուրիշներ վնաս կը պատճառեն անոր: «Խորհրդարանի քննարկումները ոչ մէկ կողմի դէմ ուղղուած էին, այլ կը փորձէին սկսիլ ներքին եւ արտաքին կողմերուն միջեւ երկխօսութիւն մը, Թաէֆի գործադրութեան, սուրիական ներկայութեան եւ ներքին այլ հարցերու շուրջ», ըսաւ ան:

Հարպ նկատել տուաւ, որ կառավարութեան յայտարարութեան խորհրդարանին կողմէ քննարկումին ընթացքին կարգ մը յայտարարութիւններ դուրս եկած են քաղաքական սահմաններէն եւ վերածուած՝ սպառնալիքի:

«Մարոնի եպիսկոպոսներու խորհուրդի նախանցեալ օրուան յայտարարութիւնը տեղին էր, արտայայտած է բազմաթիւ լիբանանցիներու զգացումները, միշտ մնայով սակայն յայնախոհ եւ երկխօսութեան պատրաստ», ըսաւ Երեսփոխանը:

Հարպ ըսաւ, որ կառավարութեան վստահութիւն չէ շնորհած, որովհետեւ անոր յայտարարութիւնն ու վարչապետ Ռաֆիք Հարիրիի պատասխանը փակած են Սուրիոյ հետ յարաբերութեան քննարկումի դուրը:

ԱՆՈՒՇԱՆԱՆԱՆՈՒ ՍԱՐԳԻՍ

Տօնական օրերու խրախմբանքի ձեր սեղանները ճոխացուցէք համեղ անուշեղեններով

ԱՐԱՐՍ ՓՈՂՈՅ
ՊՈՒՐԵ ԲԱՍՈՒՏ ԲԵՌ. 261475

ԿՈՒՉՈՒԻ

«Բամար» ընկերութիւնը, Լիբանանի մէջ ճարտարարուեստի իր մարզի թիւ 1 հայթայթողը, կարիք ունի՝

- Կաճառորդի (salesman)՝ արհեստագիտական արտադրութիւններ վաճառելու համար
- Ելեկտրագէտի (electronics technician)
- Ջրաբաշխութեան մասնագէտի (hydraulic technician)

Դիմողներուն տարիքը պէտք է ըլլայ 25ի եւ 45ի միջեւ:

Յայտնելու տեղեկութիւններու համար հեռաձայնել 01-800563/4 եւ 01-684856 (Տրքուէնի) թիւերուն կամ Սի. Կի. դրկել հետեւեալ ֆաքսի թիւին՝ 01-808730:

al-mashrek
INSURANCE & REINSURANCE S.A.L.
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.
(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223

ՄԱՀԱԶԴ

Տիկին Էլիզ Գալաթեան եւ զաւակները՝ Յակոբ եւ Զարուկ
Տէր եւ տիկին Գրիգոր Զէքէմեան
Օրդ. Թերեզ Տէր Յակոբեան
Տէր եւ տիկին Վարդգէս Յովսէփեան եւ զաւակուհի
Տիկին Արաքի Մահմաճեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Մուրատ Մուրատեան
եւ ճամայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ԱԶՍՈՒՇԻ ՏԵՐ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 9 Նոյեմբեր 2000, Երեկոյեան ժամը 8:00ին:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 10 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Տորա, Կիլիկեան վարժարանի մօտ, Շաբաթ 11 եւ Կիրակի 12 Նոյեմբերին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ծովիկ Մինասեան եւ զաւակուհի
Տիկին Լուիզ Մինասեան
Տէր եւ տիկին Մանուէլ Մինասեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Րաֆիկ Թորոսեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Տիգրան Պետրոզեան եւ զաւակուհի
Օրիորդներ Ժաքլին եւ Նանտա Մինասեան
եւ ճամայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, զաւակին, եղբոր եւ հարազատին՝

ԸՐԻՍԹ ՄԻՆԱՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 7 Նոյեմբեր 2000ին, Պրիւքսէլի մէջ, յետ կարճաժամ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 10 Նոյեմբեր, Պրիւքսէլի մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
- Հանգուցեալին մահուան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Նոյեմբերին, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յատար Ս. պատարագի:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԳՐԱՏԱՐԱԾ

12 ԳԻՐԲ
= 15.000 Լ.Ո.

Փոխան 15.000 Լ.Ո.ի ընտրել չորս տարբեր հաւաքածոներէն մէկը

ՎՃԱՐԷ՛ 15.000 Լ. Ո. ԵՒ ՄՍԱՑԻՐ 12 ԳԻՐԲ

ՎՃԱՐԷ՛ 50.000 Լ.Ո. ԵՒ ՄՍԱՑԻՐ 48 ԳԻՐԲ

60.000 Լ.Ո.ի փոխարէն վճարել՝ 50.000 Լ.Ո. եւ ստացիր չորս հաւաքածոներու 48 գիրքերը

48 ԳԻՐԲ = 50.000 Լ.Ո.

Այցելեցէք Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կայանկերպած գիրքերու վեղջ-վաճառքի ցուցարարը, Շաբաթ, 11 Նոյեմբերին մինչեւ Կիրակի, 19 Նոյեմբեր 2000:

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՑ

ԱՆԱՆ ԺԸՆԵԻՒ ՄԷՉ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՅԱԻ ԲԼԵՐԻՏԵՍԻ ԵՒ ՏԵՆՔԹԱՇԻ ՀԵՏ

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան Կիպրոսի նախագահը եւ կղզիին թրքական բաժնին ղեկավարը Չորեքշաբթի օր հրաւիրած է Յունուարին խաղաղութեան բանակցութեանը նոր *nauis*ի մը մասնակցելու, անոնց հետ ժր-նեի մէջ տեսակցութիւններ ունենալէ ետք:

Անան յայտնած է, թէ անուղղակի բանակցու-թիւններ տեղի ունեցած են, որոնց ընթացքին Նոյեմբեր 15-ն սկսեալ Կիպրոսի նախագահ Կլաֆթոս Բլեթիտէս եւ թուրք համայնքի ղեկա-վար Ռաուֆ Տենքթաշ միջնորդի մը միջոցաւ բա-նակցած են: Անոնք կ'աւարտին այսօր:

Միւս կողմէ, Եւրոպական Միութիւնը Չորեք-շաբթի օր յայտնած է, թէ քաջայերուած կը գտայ Կիպրոսի հարցին քաղաքական լուծում մը գտնելու ճիգերով:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՌՈՒՍԻԱ Կ'ԸՆԴԴԻՄԱՆԱՅ ԹԱԼԵՊԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ

ՄԱՍԿՈՒԱ, 9 (ՌՈՅԹԸՐԶ).- Թուսիս կ'ընդդի-մանայ Աֆղանիստանի իշխող թայեպան փն-եայներուն հետ բանակցութիւններու եւ կ'ուզէ, որ խմբակին դէմ պատժամիջոցներուն թափ տրուի, յայտնած է ապահովութեան մարզի ռուս պաշտօնատար մը Հինգշաբթի օր:

Թուսիսը Ապահովութեան Խորհուրդի քար-տուղար Սերգեյ Իվանով յայտնած է նաեւ, թէ Մոսկուա կ'ուզէ, որ թայեպանները բանակցու-թիւններու սկսին ընդդիմադրութեան հետ՝ կա-ռավարական ընկերակցութիւն մը կազմելու հարցով:

Ան հարցազրոյցի մը ընթացքին ըսած է, որ անհրաժեշտ է պատժել ռեւէ մէկը, որ թայեպան-ներուն փնտրական կամ նիւթական օժանդակ-ութիւն կը յատկացնէ:

ՔԱԹԱՐ ՓԱԿԵՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ



Խարազի եւ Շարեհ Տոհա կը հասնին:

Քաթար տեղի տալով արաբական ճնշում-ներուն դիմաց, երէկ փակեց Տոհայի մէջ իս-րայէլեան առեւտուրի գրասենեակը: Մէու-տական Արաբիա, Իրան եւ իսլամական ու արաբական այլ երկիրներ սպառնացած էին *պոլքոթի* ենթարկել Տոհայի մէջ 12-14 Նոյեմ-բերին կայանալիք Իսլամական Խորհրդաժո-ղովի Կազմակերպութեան վեհաժողովը, եթէ Քաթար չխլի Իսրայէլի հետ կապերը:

Այս որոշումին լոյսին տակ, Սէուտական Արաբիա եւ Իրան երէկ յետ կոչեցին *պոլքոթի* իրենց որոշումը եւ անմիջապէս Տոհա ու-ղարկեցին իրենց արտաքին գործոց նախա-րարները՝ Ապտալա իշխանը եւ Քամալ Խա-րապիին, որոնք արդէն իսկ սկսան մասնակ-ցել արտաքին գործոց նախարարներու ժո-ղովներուն, որոնք կը նախապատրաստեն խորհրդաժողովը, խորհրդաժողովին պիտի մասնակցին 55 երկիրներ: Երէկ Տոհա ուղ-ղուեցաւ նաեւ Սուրիոյ արտաքին գործոց նախարարը՝ Ֆարուք Շարեհ, մասնակցելու սոյն ժողովին:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ԹՈՒՐԲԻԱ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԻ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թուրքիոյ կառավա-րութիւնը երէկ նիւտ մը գումարած է քննարկելու համար Եւրոպական Միու-թեան կողմէ ներկա-յացուած «Անդամակ-ցութեան Գործակցու-թեան Համաձայնագի-րը», որ արմատական բարեկարգումներ կը պահանջէ մարդկային իրաւունքներու, ժո-ղովրդավարութեան եւ տնտեսութեան մարզերուն մէջ:

Երէկ հաւանական կը թուէր, որ Անգարա Եւրոպական Միու-թեան նշած պայման-ներուն մեծամասնու-թիւնը պիտի որդեգրէ, սակայն անիկա կ'ընդ-դիմանար Կիպրոսի տագնապին արագ լու-ծումի մը համար քայ-լերու դիմելու պահան-ջին:

Արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմ յայտնած է, թէ Թուրքիա ունի այն պագուցումը, որ Ե. Միու-թեան ուղեցոյցը «ընդ-հանուր առմամբ դրա-կան է», բացի այն սկ-նարկութիւններէն, որոնք կը վերաբերին Կիպրոսի հարցը լուծե-լու ՄԱԿի ճիգերուն:

«Կառավարութիւնը կարեւորութիւն պիտի ընծայէ սահմանադ-րութեան ծիրէն ներս անհատներու իրա-ւունքներու եւ ապա-տութիւններու բարե-լուծման», յայտնած է Ճէմ Սթրապպուրկի մէջ, ուր ներկայ կը գտնուէր Եւրոպայի Խորհուրդի ժողովնե-րուն:

Փոխ վարչապետ Մետուք Երլմապ, որ Ե. Միութեան կապուած հարցերով վաղու իր երկրին գլխաւոր ներ-կայացուցիչն է, ընդ-հանուր առմամբ լաւա-տեսութեամբ արտա-յայտուած է:

«Կան կարգ մը դժուարութիւններ, զորս նախատեսած էինք: Սակայն կը կար-ղովրդավարութեան եւ տնտեսութեան մարզերուն մէջ:

Արտաքին գործոց նախարարութիւնը առաջարկներու ներ-կայացումը նկարա-գրած է իբրեւ կենսա-կան հանգրուան մը, սակայն մերժած է Թուրքիոյ թեկնածու-տագնապին արագ լու-ծումի մը հարցին լուծման:

Ե. Միութեան ըն-դարձակման հարցե-րու յանձնակատար Կուրթըր Վերհէօլըն ըսած է, թէ սակիս «պատմական օր մըն է, որ կրնայ պատմու-թիւնը փոխել Եւրոպա-յի եւ Թուրքիոյ հա-մար»:

«Անդամակցութեան Գործակցութեան Հա-մաձայնագիրը» կը պահանջէ Թուրքիա-յէն, որ քայլերու դիմէ մինչեւ 2001ի աւարտ արմատախիլ ընելու համար տանջանքնե-րը, բարելաւելու դա-տական մարզը եւ քա-ղաքական խօսքին դէմ սահմանափա-կումները շնջէ: Անիկա նաեւ կոչ կ'ուղղէ Թուրքիոյ, որ շարու-նակէ մահապատիժնե-

րը չգործադրել:

Փաստաթուղթը կոչ կ'ուղղէ Անգարայի, որ զօրավիզ կանգնի Կիպրոսի հարցի լուծ-ման համար ՄԱԿի ճի-գերուն: Սակայն այս հարցը առաջնահեր-թութիւններու շարքին դնելը կրնայ կարգ մը թուրքերու կողմէ վի-ջոււմ մը նկատուիլ Ե. Միութեան անդամ Յունաստանի:

Ե. Միութեան փա-տաթուղթը վզուշացած է «քիւրտ», «քրտերէն» կամ «փոքրամասնու-թիւն» բառերու գոր-ծածոթեանէն: Անոնցմէ որեւէ մէկուն գործա-ծութիւնը վայրոյթ պի-տի պատճառէր թուրք պաշտօնատարներու:

Սակայն անիկա ընդհանուր առմամբ կոչ ուղղած է, որ վերջ տրուի թուրք քաղա-քացիներու իրենց սե-փական լեզուով սփռումներ կատարե-լու դէմ արգելքին:

Թուրքիա կը մերժէ իր 12 միլիոն քիւրտե-րը փոքրամասնութիւն նկատել:

Տնտեսական գեո-նի վրայ, Ե. Միութիւնը շեշտած է Թուրքիոյ Գրամական Միջազ-գային Ֆոնտին 40-րակցութիւնը վայելող ծրագիրին կարեւորու-թիւնը: Անիկա կ'առա-ջադրէ մինչեւ 2002 թուական տարեկան սղաճի համեմատու-թիւնները 10%-ը վար համեմատութիւններու իջեցնել, բաղադրուած 1990ական թուականնե-րու 100 առ հարիւրին:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՐԱՆ

ԿԱՆՃԻ ԻՐԱՐԱՆՅՈՒՄ ԿԸ ՍՏԵՂԾԷ ԻՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ



Աքպար Կանճի

ԹԵՀՐԱՆ, 8 (ՌՈՅԹԸՐԶ).- Իրանցի այլախոհ լրագրող մը, որ կը դատուի, Հինգշաբթի օր առ-եանին ըսաւ, որ Կինք դատապարտելու որոշու-մը արդէն իսկ տրուած էր, երբ հրապարակուած էին լուրերը, որոնք մարդասպանութիւններու շարքի մը մեղսակից կը դարձնէին բարձրաստիճան պաշտօնատարներ:

Աքպար Կանճի ըսաւ նաեւ, որ յեղափոխա-կան ատենանի դատաւորը իրաւունք չունի Կինք դատելու: Կանճի նաեւ սպառնաց բացա-լայտել եւ հրապարակել անունները պաշտօնա-տարներու, որոնք հրահանգած են սպանու-թիւնը չափաւորական մտաւորականներու:

Դատավարութեան նիստին սկիզբը, Կանճի իրարանցում մը ստեղծեց, երբ յայտարարեց, որ բանտապահներ Կինք ծեծած են պարտադրած են, որ հասարակ ճճագործի տարապը հագուի: Կանճի շեշտեց, որ ատենանը ուրեմն իր վճիռը արձակած է եւ Կինք դատապարտած՝ դատավա-րութեանէն առջ:

Կանճի, որուն յօդուածները մեծ ժողովրդա-կանութիւն ունեցած էին, ըսաւ նաեւ, որ գաղտ-նի սպասարկութեան նախարարութիւնը Կինք հանդիպումի մը հրաւիրած է, պահանջելու հա-մար, որ իր քննութիւնները թիրախ չդարձնեն բարձրաստիճան պաշտօնատարներ: Կանճիէն պահանջուած է նաեւ փնտռութիւնը չկատարել Մայիս 1997-ին առաջ տեղի ունեցած դէպքերու եւ հարցերու մասին: Յիշեալ թուականին նա-խագահ ընտրուած էր չափաւորական նկատ-ւող Մոհամէտ Խաթեմի: Կանճի աւելցուց, որ իրեն փոխանցուած է նաեւ, որ եթէ չենթարկուի պահանջներուն, երկար բանտարկութեան պի-տի դատապարտուի:

Յեղափոխական ատենանի գլխաւոր դատա-խաչ Ահմէտ Շարիֆի Կանճին ամբաստանեց ազգային եւ պետական ապահովութեան դէմ գործելու, իսլամական կառոյցին դէմ քարոզչու-թիւն տարածելու եւ կրօնական սրբութիւններ անարգելու յանցանքով: Կանճի դէմ ուղղուած են նաեւ այլ ամբաստանութիւններ:

ՌՈՒՍԻԱ ՄԻՆՉԵՒ 2005 ՊԻՏԻ ԿՐՃԱՏԷ ԲԱՆԱԿԻՆ ԹԻԻԸ



Վլատիմիր Փուրիճ

ՄԱՍԿՈՒԱ, 9 (ՌՈՅԹԸՐԶ).- Թուսիսը Ապահովութեան Խորհուրդի քարտուղարը միջ պաշտօնատարը Հինգ-շաբթի օր յայտնած է, որ ռուսական բանակին թիւը մին-չեւ 2005 թուական 600 հազարով պիտի կրճատուի: Նախագահ Վլատիմիր Փուրիճը Ա. Խորհուրդի միջ-նիստին բացումը կատարելով յայտնած է, թէ, ժամանա-կը հասած է, վերջնական որոշումներ կալցանելու: Թուսիսը արդէն յայտարարած էր, թէ, բանակը 365 հա-զարով պիտի կրճատ, եւ լրատու գործակալութիւննե-րը յստակ դարձուցած են, որ 600 հազարի թիւին միջ-նկատի առնուած են այս կրճատումները: «Ինքսթիպար» լրատու գործակալութիւնը Ապահո-վութեան Խորհուրդի զուխ քարտուղար Վլատիմիր Փու-րիճովը միջբերկով ըսած է, թէ, կրճատումները անպա-լման ուղղակիօրէն միաւորներու չափին համեմատու-թեամբ չեն:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՍԿԱՍԸ Ե ԽՈՐՅՈՒՐԱՆԻՆ ...

Շարունակուած 2րդ էջէն

Ան աւելցուց, որ այս որոշումը նաեւ աշ-խարհին ուղղուած պատգամ մըն է, թէ Լի-բանան սկսած է բանալ իր դռները համաշ-խարհային տնտեսու-թեան առջեւ, վերցնե-լով բոլոր կաշկան-դումներն ու արգելք-ները, որոնք կը սահ-մանափակէին իր տնտեսական ոճը:

«Բաց երկինքի քաղա-քականութիւնը թափ պիտի տայ առեւտուրի, զբօսաշրջութեան եւ ծառայութեան մար-զերուն եւ Լիբանանին պիտի շնորհէ շրջանին

մէջ առաջնակարգ տնտեսական դիրք, զայն կապելով աշ-խարհի բոլոր կողմե-րուն», ըսաւ ան:

Հանրօգուտ աշխա-տանքներու եւ շինա-րարութեանց կապալա-րուներու սենտիքայի կազմակերպած «Ֆի-նանսաւորում կա-ռուցողական ծրագիր-ներու» խորհրդաժողո-վին բացումը կատարե-լով, Հարիրի նկատել տուաւ, որ ուժեղ պե-տութիւնը այն չէ, որ սեփականատէրն է ամէն բանի եւ գործադ-րողը բոլոր ծրագիր-

ներուն, այլ ան, որ կրնայ զօրաշարժի են-թարկել իր բոլոր մի-ջոցներն ու կարողու-թիւնները, եւ ապա ներդրումներուն ու տնտեսական աճին:

«Իշխանութիւնը շա-րունակականութիւն եւ հետեւողականութիւն կ'ենթադրէ», ըսաւ Հա-րիրի, դիտել տալով, որ յաջողութեան հիմը հաւաստիութիւնը է խոստումները յարգելն է: Ասկէ մեկնելով, ան հաւաստեց, թէ կառա-վարութիւնը տէր պի-տի կանգնի անցեալ երկու տարիներուն կամ անոնցմէ առաջ կապալառուներու նկատմամբ պետու-թեան յանձնառութիւն-ներուն եւ անմիջապէս պիտի որդեգրէ անհր-աժեշտ միջոցառում-ները՝ տարեվերջէն առաջ վճարելու կա-պալառուներու ուշա-ցած գումարները:

«Պետութեան գոր-ծ ու ն է ու թ ե ա ն առանցքն է դիրքացնել քաղաքայիններուն գործերը եւ կարելի եղածին չափ արագ իրագործել կանոնք», յայտարարեց վարչա-պետը, յայտնելով, որ կառավարութիւնը կը պատրաստէ շինարա-րութեան վերաբերեալ նոր օրէնք մը, որ կը դիրքացնէ այս բնագա-ւառին մէջ աշխատանք-ը:

ՆԵՐԿԱՅ ԶԱՆԳՐՈՒԱՆԻՆ...

Շարունակուած 2րդ էջէն

սպառնալիքները կը հաստատեն, թէ Իսրայէլ կ'ուզէ բռնազրաւուած պահել որոշ լիբանան-եան շրջաններ, հետագայ խուսաճումներով արդարացնելու իր ոտնձգութիւնները: Ան նկա-տել տուաւ, որ Իսրայէլ այս պահուն կրնայ դի-մել Լիբանանի դէմ բռնարարներու, քողարկե-լու եւ ուշադրութիւնը հեռացնելու համար իր ներքին տագնապէն եւ պաղեստինեան ինթի-ֆատայէն:

Նախարար Հրրաուի ՄԱԿէն եւ ընդհանուր քարտուղար Քոֆի Անանէն պահանջեց տէր կանգնի իրենց պարտաւորութեան, պարտադ-րելու թիւ 425 որոշումին ամբողջական գործադ-րութիւնն ու հաստատումը Միջին Արեւելքի կա-լուսութեան:

● ՆԱԽԱՐԱՐ Հրրաուի երէկ ընդունեց նաեւ ռուսական պատուիրակութիւն մը եւ անոր հետ քննարկեց լիբանանեան բանակին ունեցած վէճերու արդիականացման վերաբերեալ հար-ցեր, հաղորդեց Ազգային Լրատու գործակալու-թիւնը եւ յաւելեալ մանրամասնութիւններ չտուաւ:

Հ. Յ. Դ. 110 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԱՐԹՈՒՆ ՄՆԱԼ ԵՒ ՀՍԿԵԼ

«Հ. Յ. Դաշնակցութեան ուժը ո՛չ թե ինքն իր մէջ ամփոփուած ըլլալն է, այլ իրմէ գուրս: Անկրկա ազգային ուժ մըն է»:

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԿԵԱՆ (1875-1947)

Անվերապահ կրնանք ըսել թէ գործի կուսակցութիւն է Դաշնակցութիւնը: Ան իր գոյութեան առաջին տարիներէն սկսեալ, որպէս կազմակերպութիւն եւ որպէս գաղափարաբանութիւն ինքզինք արմատաւորեց Հայ ժողովուրդի աշխատանքին ներս, եղաւ բանուորին, արհեստաւորին, գործատիրոջ, մտաւորականին, պարզ գեղջուկին ու քաղաքացիին սրտերուն խօսող կազմակերպութիւն, որուն աշխատանքի ուղեգիծը մէկ էր ու նուիրական - ծառայել ժողովուրդին: Ու ապա ծառայութեամբ է, որ բարձրացաւ ան՝ իր գործունէութեան սկիզբի տարիներէն սկսեալ պատուաւոր տեղ մը զբաղեցնելով մեծամասնութեան արտին մէջ: Ան նոյն զրօշին տակ համախմբեց աղքատն ու ունեւորը, ազնւականն ու ռամիկը, գէնքի մարդն ու մտքի սպասարկուն, եղբայրացուց գանձը՝ Հայրենիքի եւ ժողովուրդի ազատութեան, անկախութեան ու բարօր կեանքի մը տեսլականները զրոշմելով անոնց հողիներուն ու մտքերուն մէջ: Ան իր պատմութեան ընթացքին՝ հազարու մէկ վերլուծելով մեծամասնութեան դիմադրանքն ու անթիւ գոհեր եւ հերոսներ ընծայելէ ետք, իր «Նաւ»ը ներկայիս վերստին առաջնորդեց ղէպի երկիր ու հաստատ կերպով խարխիւ նետեց հոն, ուր տարիներ շարունակ իր տարած պայքարներուն վերջնապատանկն էր դարձած հազարաւոր ուխտեակներուն: Ան իր գոյութեան 110 տարիներուն ընթացքին յարատեւ կերպով պայքարեցաւ, սուրով ու գրիչով, իր ժողովուրդի կողքին ու իր ժողովուրդին համար, ըլլալ հայրենի հողին վրայ եւ ըլլալ Սփիւռքի խոշոր ուսանողի ներքին ու արտաքին բոլոր ճակատներուն: Զարկաւ ու զարնուեցաւ, յաղթեց ու յաղթուեցաւ ու առաջնակարգ դիրքերու վրայ մարտնչելով միշտ քաղց պատմութեան հրամայականին հետ, առանց յուսահատելու եւ առանց ընկերակցելու: Եկող սերունդները պիտի խօսին ու գրեն իր գինուորապետներուն կատարած հին ու նոր սիրազորութիւններուն մասին, անոնց ցուցարարած անձնագոհութիւններով պիտի առաջնորդուին դեռ երկար, որոնք երաշխիքը դարձան իր ազգային հզօրացման: Առանց իր նուիրումին եւ առանց իր ցոյց տուած պայքարելութեան, զիտուար պիտի ըլլար իր գոյութիւնը զգալի դարձնել ազգային-քաղաքական մեր իրականութեան մէջ:

Ճիշդ է, որ շարքերէն ներս տկարութիւն ցոյց տուողներ եղան, նահանջողներ (ու պիտի ըլլան տակաւին), գինք լքողներ: Եղան նաեւ քարկոծողներ, գինք ուրացողներ, յաճախ՝ անձնական ու գաղափարական (սկզբունքային) պատճառներու լրբամար: Ասոնցմէ ոմանք նոյնիսկ գինք վարկարեկել տենչացող գործունէութեան դիմեցին, ինչպէս ապարդիւն պայքարի ճահճախուս լճացումներու մէջ, որոնք լճացումը եղան իրենց անձին ու իրենց հասարակական ասպարէզին: Ու ոգին իր, հակառակ իր դէմ փոթորիկով արգելքներուն, մնաց աներբեր ու անյաղթելի, նման գինք ծնող ու սնուցող ժողովուրդին: Տոկաց ան, որովհետեւ նուիրուելու եւ նուիրելի գիտէ: Յարատեւեց ան, որովհետեւ գոհուելու եւ գոհել գիտէ: Իր ժողովուրդին մէջ արմատներ նետեց գինք, որովհետեւ ծառայել ու ծառայեցնել գիտէ: Իր ծնունդէն ի վեր ան իր ժողովուրդին ճան միաձուլուած կը գործէ, իր գոյութիւնը միմիայն անոր համար կ'երկարագէ, անոր համար կը պայքարի աննահանջ կամքով: Իր որդեգրած գաղափարները, իր հետապնդած նպատակները, ինչպէս կը պատգամէ մեզի բանաստեղծը՝ «տկարութիւն չեն ճանչնար»: Իր գործունէութեան զաշտէն ներս սակայն, սկիզբէն աշխատելու ձեւերն իր եղան ճկուն, միշտ յարմարելով տիրող պայմաններուն, իսկ իր դաւանանքին հուսկները մնաց անփոփոխ: Ան քաջ կը գիտակցէր, թէ իր հրահրած գաղափարներն ու իր իւրացուցած գործունէութիւնը, իր քարոզածներն ու իր կատարած արարքները, չեն կրնար անջատուել իրարմէ, այլապէս ո՛չ գաղափարն ու ոչ ալ քարոզը իմաստ պիտի ունենային ու արժէք: Հոս անգամ մը եւս վերլուծեմք հմուտ խմբադասակալ Շաւարշ Միսաքեանի մէկ խորհրդամտ խօսքը: «Լաւագոյնս ծառայած կ'ըլլանք մարդկութեան, եթէ յարատեւորեն ու հաւատարմօրէն ծառայենք այն ժողովուրդին, որուն կը պարտինք մեր արեւը»: Եւ Դաշ-

նակցութիւնը իր «արեւը» կը պարտի իր ժողովուրդին, որուն պիտի ծառայէ դեռ երկար, մինչեւ ամբողջական յաղթանակ: Հայ ժողովուրդի լրջամիտ մտաւորականներէն Նիկոլ Աղբալեան, իր մահէն քանի մը տարի առաջ, հետեւեալ մարգարէաշունչ պատգամը փոխանցեց մեզի: «Հանգիստ խիղճով եւ պայծառ հայեացքով նայում եմ կուսակցութեան անցեալին: Կորած ու մոլորած մի ժողովուրդ դարձնել ռազմունակ մի ազգ եւ քաղաքական կենսեղով պարեցնել ծխակախի, տալ նրան հայազգի հայրենիք ու պետութիւն, դնել նրա ապագայ մշակոյթի հիմնաքարերը՝ սրանք գործեր են, որ կատարեց Դաշնակցութիւնը յամառօրէն եւ անթիւ գոհերի գնով: Սա կատարեց իր պատմական պարտականութիւնը: Եղաւ ազնիւ, անձնուէր եւ հաւատարիմ վաստակաւոր: Ըվարանեց ոչ մէկ գոհողութեան առջեւ եւ հիմա հանգիստ նայում է իր գործին, որ զարգանում է Արարատի շուքի տակ»:

Այո՛, Դաշնակցութիւնը յարուցեալ պատկաւորի մը նման, ներկայիս վերստին կը գործէ եւ կ'ուճանայ մեր սեփական հողերուն վրայ, նայուածքէ հեռուն՝ Արարատին յառած, միշտ հաւատարիմ՝ իր դաւանանքին եւ սկզբունքներուն: Ժողովուրդը իրմէ դեռ շատ անկախութիւններ ունի: Արդար անկախութիւններ: Իր պարտքն է, որ այդ անկախութիւնները տեսանելի իրականութեան վերածէ՝ միշտ հայրենիքին ու ազգին շահերը նկատի առած: Ուրիշ նպատակ չունի ան, եւ պէտք չէ ունենայ: Անձնակա՛ն, ճղճիմ եւ գժուճ հաշիւները երբեք չեն արմատաւորուած իր գաղափարապաշար արժեքներն ներս, որովհետեւ հինէն քաջ գիտակցած էր ան, թէ անհատական ամէն հաշիւ, ուշ կամ կանուխ, կ'արժանանայ իր ժողովուրդի արհամարհանքին, իր հաւատաւոր շարքերու անարգանքին, եւ այդ իր տապալանքարը կրնար հանդիսանալ:

Ներկայիս ժողովուրդի կենցաղային ու տնտեսական մարզերէն ներս անոր թիւկուր կանչելով, ինչպէս նաեւ ամուր պետականութիւն ունենալու գաղափարին զօրավիզ դառնալը իր առաջնահերթ նպատակներէն մէկն է: Կը հաւատայ ան, թէ առանց ստոյգ բարեկամութեան ու ամբողջական չկայ փրկութիւն եւ ոչ ալ ազգային յարատեւում: Ի վնաս ժողովուրդին շարաշահութիւններ յառաջնորդ պետութիւններն ու հասարակական դեկադրութիւնները, անխուսափելի կերպով ենթակայ եղած են անհետացման: Ժողովուրդը անգիշող կենցաղով միշտ սէրը դարձած է իր ճակատագրին, որ ճակատագիրն է նաեւ իր հայրենիքին: Պատմութիւնը այս մէկը կ'ուսուցանէ մեզի իր ներքին (նեղ) եւ արտաքին (լայն) ըմբռնումներով: Ոչ ոք, ոչ մէկ քաղաքական համակարգ կրցած է ընդմիշտ իր ժողովուրդը խարխիլ:

Ժողովուրդը, հայրենիքը ու անհատն ունեցած հասարակական դիրքը քանձաւական շահերու ծառայեցնողները խոցելի ու անբարձալի եղած են միշտ Դաշնակցութեան բարոյական ըմբռնումներուն, իր գաղափարաբանութեան, որ անհատական շահերէ հեռու մնացած է ու գայն խտօրէն դատապարտած:

Հոն կամ հոս, Սփիւռքի մէջ, Դաշնակցութիւնը իր սկզբունքները բարձր պահած նոյն հաւատքով եւ նոյն խոստագրահանջ կենցաղով կը քալէ իր ուղիով: Ան կը քալէ այն ուղիէն, որմէ տարիներ առաջ քալեցին ու ճամբայ հարթեցին իր հիմնադիրներն ու անոնց յաջորդող խաչապաշար սերունդը, որոնք տեսիլք ունէին ու հաւատք՝ ժողովուրդի ու հայրենիքի հանդէպ: Անոնք իր գաղափարներէն մեզ լրբին մինչեւ հոս, մինչեւ վերածնունդ հայրենիք, որ հպարտութիւն է նաեւ մեր ժողովուրդին, որ «Հ. Յ. Դ. -ի հանդէպ միշտ ունեցել է առանձնատարական վերաբերմունք եւ նրանից անկախել է առանձնատարական սպասելիքներ» ինչպէս կը հաստատէր անցող Չոկեմբերի կիսունը, ուսուստառ թերթի մը Երեւանի թղթակիցը, Հ. Յ. Դ. -ի խորհրդի քաղաքական դիւանի անդամ Կարօ Արմէնեանի ուղղած իր հարցումներէն մէկուն մէջ:

Հոն կամ հոս, Սփիւռքի մէջ, եթէ թեւեւ գոյութեամբ ու անկարգապահութիւններն ի յայտ եկան իր շարքերէն ներս, ան միշտ հաւատարիմ իր կանոնադրին ու անոր


ԱՐՑԱԽԻ ՀԻՒՍԻՍ - ՀԱՐԱԻ ԾԱՆԱՊԱՐՀԸ

Խորհրդային իշխանութեան ժամանակաշրջանին, Ազրպէյճան ծրագրուած ձեւով Լեռնային Ղարաբաղի եւ շրջակայ ազրպէյճանական գիւղերու կամ քաղաքներու միջեւ ստեղծած էր ցանցեր ճամբաներու, ելեկտրական եւ ջուրի կայաններու: Կը նշանակէ, որ Ազրպէյճան այս ծրագրով կը միտէր Լեռնային Ղարաբաղը կախեալ պահել իրմէ, աւելին, արգելք հանդիսանալ Լեռնային Ղարաբաղին, որ կարենար տարբեր շրջաններու հետ հաղորդակցութիւն ստեղծել:

Ներկայիս Ստեփանակերտէն Մարտակերտ կամ Մարտունի երթալու միակ ճամբան կ'անցնի Աղտամէն, իսկ Ստեփանակերտէն Հազրուլի հասնելու համար անխուսափելի է Աղտամն ու Ֆիզուլին:

1994 Մայիսի գինադարէն անմիջապէս ետք Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Հիմնահարցերէն մէկն էր զարգացնել ջուրի, ելեկտրականութեան եւ ճանապարհներու անկախ ցանցերը:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը բնականաբար պիտի ստատրէր եւ զօրավիզ կանգնէր որեւէ ազգանուէր ծրագրի: Ծնորհիւ «Հայաստան» Հա-




Այժմու ձածքան՝ Ազրպէյճանական հեռանկարով:

մահայկական Հիմնադրամի ճիգերուն, Լեռնային Ղարաբաղի մէջ ու թ տարիներու ընթացքին կարելի եղաւ իրականացնել ջուրի, ելեկտրականութեան ցանցեր եւ շինել Միւրիշ - Աւտուր - Հացի եւ Սէյտէլ - Քիշլաւ, հողային ճանապարհները:

Հիմնադրամի մեծագոյն եւ աննախընթաց յաջողութիւնը եղաւ համահայկական (Սփիւռք եւ Հայաստան) ճիգերով կառուցուած Գորիս - Ստեփանակերտ ճանապարհը, որ Հայաստան - Ղարաբաղ հոգեկցութիւնը գործնականացուց մայր հողի վրայ եւ դարձուց կենդանի, ապրող հաղորդակցութեան կապի:

Գորիս - Ստեփանակերտ ճանապարհի կառուցումէն



Նոր ձածքան, որուն կառուցումը սկսած է արդէն:

Ետք, երկրորդ կարեւոր հարցը, որ կը դրուի այսօր հայութեան առջեւ, հիւսիս - հարաւ ճանապարհի կառուցումն է, որ Լեռնային Ղարաբաղի շրջանները պիտի կապէ իրարու, առանց ազրպէյճանական հողէ անցնելու: Այս ճանապարհը իւրապատուկ նշանակութիւն պիտի ունենայ տնտեսական, քաղաքական եւ ապահովական իմաստով, եւ Լեռնային Ղարաբաղի իւրաքանչիւր շրջան անքակտելի կերպով պիտի կապէ Մայր Հայաստանի:

Հիւսիս - հարաւ ճանապարհը պիտի անցնի քսան տարբեր գիւղերէն, եւ ոչ միայն իր դրական ներդրութիւնը պիտի ունենայ տնտեսական մարզէն ներս, այլեւ՝ բնակչութեան աճին վրայ:

Հիւսիս - հարաւ ճանապարհի երկարութիւնը՝ 169 քմ., ցարդ օգտագործուած ճամբու երկարութեան կէսն է:

Ան պիտի բաղկանայ երեք գլխաւոր հատուածներէ՝

- Ստեփանակերտ - Կարմիր Ծուկայ 39 քմ. Կարմիր Ծուկայ - Հազրուլի 35 քմ.

- Ստեփանակերտ - Մարտակերտ 95 քմ.

Ճանապարհի շինութեան ընդհանուր ծախսը՝ 25,247,000 \$
1 քմ. ճանապարհը - 150,000\$
1 մեթր ճանապարհը - 150\$

Հաւաքական ճիգերով կառուցենք Արցախի հիւսիս - հարաւ ճանապարհը:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ԼԻԲԱՆԱՆԻ ՅԱՆԶՆԱԺՈՂՈՎ

«ԻՆՉՊԻՍԻՆ ԷՆ ԼԻՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԻՈՐՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԻ ԿՈՐՑՆԻ ԻՐԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԸ»

Մեղրու լեռնաշղթայի տակով փապուղի կառուցելու գաղափարը ծնուել է 1970ական թուականներին կէսերին, իսկ Հայաստանի անկախացումից յետոյ կատարուեցին որոշ խոնարհական աշխատանքներ: Վարչապետ Բազարատեանի կառավարութեան օրօք փապուղիի կառուցման մասին խօսակցութիւնները կրկին մտան օրակարգ, սակայն շատ շուտով մոռացուեցին: «Հափարգանց թիւն է» արդարացումն է:

Ճարտարապետ-ճանապարհաշինարարներ իր կարծիքով, Մեղրու լեռնաշղթայի տակով տարբեր խորութիւններում կարելի է կառուցել 300 մ., 1650 մ. եւ 3000 մ. երկարութեամբ փապուղիներ կախուած ինքնաշարժներ իշխանութիւններին հետ: Նշենք, որ փապուղիի կառուցման թելիք ուսումնասիրութիւններ կատարուել են, իրանական կողմը հազար թուղթ է, սակայն ներդրումները վերադարձման խնդիր կայ: Փապուղիի կառուցումը կանխուելի է մի քանի տարներով կարելի էր գոր-

ման (հին) ճանապարհի բարձրադիր հատուածից 1650 քմ. երկարութեամբ փապուղի կառուցել եւ խուսափել Մեղրի-Քաջառան ճանապարհի բարձրադիր 9 թլոմեթրանոց հատուածից, որը ձմրան ամիսներին չափազանց վտանգաւոր է: Իսկ երբ ձմրան է գալիս, Մեղրում եւ Քաջառանում կարելի է տեսնել տասնեակ բռնատարներ, որոնք օրերով սպասում են բնութեան բարեհասնութեանը: Քաջառանի փապուղիի մասին խօսակցութիւնները վերաբարձրութեան այս տարի: Փետրուարին Երեւանի միջին դպրոցի փոխադրամիջոցները եւ ճանապարհների նախարար Հոնաթին հարցի շուրջ իրանական Հայաստանի իշխանութիւններին հետ: Նշենք, որ փապուղիի կառուցման թելիք ուսումնասիրութիւններ կատարուել են, իրանական կողմը հազար թուղթ է, սակայն ներդրումները վերադարձման խնդիր կայ: Փապուղիի կառուցումը կանխուելի է մի քանի տարներով կարելի էր գոր-

Մ. ՇԱՐԱՊԵԱՆԻԱՆ Ծար-ը՝ էջ 8

ԹԱԹՈՒԼ ՅԱՆՈՒԲԵԱՆ Ծար-ը՝ էջ 10

ԹՈՒՐԲԻԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ...

Շարունակում Ա. Էջեմ
«Այս որոշումը որդեգրում է խորհրդարանին նախաձեռնություններ... եւ որեւէ ձեռնարկ չի դրաւ թուրքիստան, կը նշուի յայտարարութեան մէջ: «Ֆրանսա պիտի շարունակէ աշխատի թուրքիստան Եւրոպական Միութեան ստեղծմանը ուղղութեամբ, կ'ըսեն Ֆրանսայի նախագահը եւ վարչապետը:

Իրենց կարգին, թրքական կուսակցութիւնները դատաւարութեան Ծերակոյտին որոշումը: Մայր Հայրենիք կուսակցութեան անդամ, Թուրքիոյ խորհրդարանի արտաքին հարցերու յանձնախումբի նախագահ Քամրան Ինան ըսաւ, որ որոշումը խումբ մը քուէարկողներու գոհացում տալու համար որդեգրուած է: «Ֆրանսայի կառավարութեան կեցուածքը շատ կարեւոր է ներկայիս», ըսաւ ան, նշելով, որ եթէ քանակաւ որդեգրուի խորհրդարանին մէջ, ապա թուրք-ֆրանսական յարաբերութիւնները մեծապէս պիտի վնասուին: Մայր Հայրենիք կուսակցութեան փոխ նախագահ Պիլիէն Սարաջալի մեղադրեց Շիրաքը եւ ժողովներ, որոնք բացարձակապէս ոչինչ ըրած են քանաձեւին արգելք հանդիսանալու համար: «Ծերակոյտականները կ'ուզեն իրենց խիղճը հանդարտեցնել Ափրիկէի եւ Հնդկաչինի մէջ Ֆրանսայի գործած ոճիրներուն համար», ըսաւ ան:

ԱՅՐ ՊԵՅՅԱԿՆԻ դեմոկրատական համագումարը, որ քաղկեդոն է բնորոշման իր նկատման կուսակցութիւններէ, դատաւարութեան ֆրանսայի Ծերակոյտին որոշումը: Համագումարին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէ, որ Հայկական Յեղափոխութեան արտաքին շատուց խորտակուած է: Համագումարին համաձայն, հայկական փինթալ խումբեր 20րդ դարու սկիզբին ցեղասպանութեան քաղաքականութիւնը հետապնդած են թուրքերու դէմ:

Համագումարը կը յայտնէ, որ Ծերակոյտին կեցուածքը մտահոգութիւն կը պատճառէ, նկատելով որ նախկինում, որ Ֆրանսա ԱՄՆ-ի Միասնական խմբակի համանախագահն է: Համագումարը կը յայտնէ, որ Ծերակոյտին որոշումը թուրքիոյ եւ թրքական այլ պետութիւններու դէմ է եւ կրնայ վնաս պատճառել Ֆրանսա - Ալբանիայի միջազգայնաբար հարաբերութիւններուն:

«ԻՆՉՊԻՍԻՆ Է՛Լ ԼԻՆԻ...»

Շարունակում՝ Տրոյ Էջ ԷՄ

Մեզիք: Անշուշտ, սա հեռանկարում, որովհետեւ Իրանից Եւրոպա տանող ճանապարհն անցնում է նաեւ Վրաստանով եւ Ռուսաստանով:

Հայաստանի Եւրոպայի եւ Իրան - արաբական աշխարհի միջեւ տարանջիկ երկրորդ դառնալու հնարաւորութիւնը ստասպել է: Եթէ Միացեալ Նահանգներն այս շրջանում ունեն շահեր, աջակցում են Մետաքսի ճանապարհի իրազդեցիկ արեւելք - արեւմուտք ուղղութեամբ, ապա Եւրոպական Միութիւնը վերջին երկու տարիներին, երբ Իրան - Եւրոպական Միութիւնը յարաբերութիւնները խուսափողականից վերածուել են աշխուժ երկխոսութեան, քաջալերում է հիւսիս-հարաւ ուղղութիւնը: Իր հերթին Իրանը, հաշուի առնելով թուրքիայի հետ առկա քաղաքական եւ տնտեսական խնդիրները, նախընտրում է Եւրոպայի հետ հարգողուել Հայաստանի տարածքով:

Եթէ Հայաստանը յաւակնութիւններ ունի դառնալու Իրանի ու արաբական աշխարհի եւ Եւրոպայի միջեւ տարանջիկ երկրորդ, օգտուել տնտեսական եւ քաղաքական աղբիւրներից, պարտաւոր է բարձր որակի ճանապարհներ ունենալ:

Ինչպիսիք է Հայաստանի իշխանութիւնների տեսակէտը: Բնականաբար՝ դրական: Մի բարձրաստիճան պաշտօնեայ («Ազգ») տեղեկացրեց, որ Հայաստանը չափազանց կարեւորում է երկրում գլխաւոր ճանապարհների վերանորոգումը, որովհետեւ Իրանի հետ տնտեսական յարաբերութիւնների խորացումը:

Եւ վերջապէս, Հայաստանը Իրանին կապող ճանապարհն ունի առաջին հերթին ուղղակի արաբական նշանակութիւն: Միւրեքի մարզի տնտեսական ամրապնդումը, Մեզիքում ուղղակի հիւստիստութեան հիմնումը, Ռուսաստանի կողմից Ազարակի պղնձաձուլային գործարանի նկատմամբ հետաքրքրութիւնը կարող է թաղել Մեզիքի Լաչինի հետ փոխանակելու դադարաւորը: Հայրենի բարձրաստիճան պաշտօնեան յիշեցրեց. «Ինչպիսիք էլ լինի Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերջնական կարգաւորումը, Հայաստանը ոչ մի դէպքում չի կորցնի Իրանի հետ սահմանը»:

Table with 2 columns: Name and Value. Includes items like ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ, Լոնտոնի սակարանին մ.է.ք., Կրամսկոյեի բուս փոխանակման սակր հետեւեալն էր երկկ կէսրիկ, Ամերիկեան տոյարի փոխանակման սակերը, Լուրս 0.8662, Ֆրանսական ֆրանք 7.5702, Քանադական տոյար 1.5482, Գերմանական մարք 2.2561, Հոլանդական ֆլորին 2.5432, Չեխոսլովակական ֆրանք 1.7548, Պոլսի ֆրանք 46.534, Իտալական լիր 2234.59, Ճափոնական եէկ 107.36, Եւրոպական քուրոն 9.924, Եւրոպական քուրոն 9.1943, Գանիական քուրոն 8.6121, ՄԷԿ սթրիլին 1.4317

ՇԱՍԵՐ ԱՐԱՖԱԹ ՌԻԱՇԻՆԿՈՐԸ...

Շարունակում Ա. Էջեմ



Ֆարսի սպանուած հրամանատարը՝ Հիւսէյն Ապալաթ:

Պարսի գրասենեակն ու բանակը մեկնարկում են իրեն չկատարեցին: Յարձակումը տեղի կ'ունենար այն պահուն, երբ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաթը Արաֆատ կը պատրաստուէր տեսակցելու Միացեալ Նահանգներու նախագահ Պիլիէն Կլինթոնին:

Իսրայէլ ամրաստանած էր Արաֆատը, որ չէ կրցած հակակշիռի տակ առնել Ֆարսի զինեալները, հակառակ անոր, որ նախկին վարչապետ Շիրան Փերէսի հետ զինադուլի համաձայնութիւն մը գոյացուցած էր անցեալ շաբաթ: Իսրայէլացի պաշտօնատարները յայտարարած էին նաեւ, որ պաղեստինցի զինեալ զեկավարներու դէմ գործողութիւններու պիտի ձեռնարկեն:

Պաղեստինցի ակնատես մը յայտնեց, որ Իսրայէլեան ուղղակի մը իջնուած արձակեց պաղեստինեան ինքնաշարժի մը վրայ, որուն մէջ կը գտնուէր Ֆարսի զեկավարը: Վերադարձած են նաեւ քանի մը անդրողներ: Այսօր յարանուստ էր Ֆարսի ընդհանուր հրամանատարը ըսաւ, որ Ապալաթ շարժումին զեկավարներէն մէկն էր: Ան հինգ տարի մնացած է Իսրայէլեան բանակի մէջ: Մարտան Պարզութի շեշտեց, որ Պարսք եւ Մոֆազ հրահանգած են Ապալաթի սպանութիւնը, որ վտանգաւոր արարք մըն է եւ թափ կու տայ լարուածութեան: Ֆարսի կողմէ հրապարակուած յայտարարութիւնը մը կը խոստանար հակադարձել յարձակումներու ձեռնարկելով

Իսրայէլացի զինուորներու եւ բնակեցման վարչերու հրահանգներուն դէմ: Պաղեստինցի պաշտօնատարները յայտնեցին, որ Իսրայէլացի մըն է եւ թափ կու տայ լարուածութեան: Ֆարսի կողմէ հրապարակուած յայտարարութիւնը մը կը խոստանար հակադարձել յարձակումներու ձեռնարկելով

Միւս կողմէ, Իսրայէլ երէկ երկրորդ օրը ըլլալով փակ պահեց Կազան Եզրիպտոսի միացնող Ռաֆահի անցքը՝ արգելելով սննդամթերքի եւ զեղի պաղեստինեան շրջաններ մուտք: Պաղեստինցի պաշտօնատարները յայտնեցին, որ Իսրայէլի սահմանապահ

ուժերը արգիլած են անցքը երեսուն բեռնատարի: Իսրայէլ փակած է նաեւ Կազայի օդակայանը: Այս միջնորարին մէջ է, որ Արաֆատ Ուաշինկթըն կը հասնէր եւ Սպիտակ Տան մէջ տեսակցութիւն կ'ունենար նախագահ Քլինթոնին հետ: Տեսակցութեան ներկայ էր նաեւ Պարսի գործող նախարար Մատլէյն Օլպրայթ: Ուաշինկթընի մէջ Արաֆատ վերստին պիտի արուղղեցին Արաֆատին, որ չվերսկսի Իսրայէլի հետ զեկավարութեան բանակցութիւններուն եւ տեղի չտայ ամերիկեան ճնշումներուն դիմաց: Համապ եւ

Ռուսիայի շրջանները կ'արտաքին գործող նախարարութիւնը շնչեց ՄԱԿի մարդկային իրաւանց Տարբերու պատասխանատու Մէյլի Ռուպինսընի հետ նախարարի ու բարձրաստիճան այլ պաշտօնատարներուն ունենալը: Նախարարութիւնը այս որոշումին յանգեցաւ, երբ

Պաղեստինեան իշխանութիւնը իր կարգին յայտարարած էր, որ պիտի չընդունի Ռուպինսընը, որ կը ծրարէր տեսակցութիւններ ունենալ Արաֆատի հետ: Տարածուած էր Եւրոպայի քաղաքացիական իրաւունքները զարգացնելու շուրջ Մատլէյն Օլպրայթի խոսքերը: Ուաշինկթընի մէջ Արաֆատ վերստին պիտի արուղղեցին Արաֆատին, որ չվերսկսի Իսրայէլի հետ զեկավարութեան բանակցութիւններուն եւ տեղի չտայ ամերիկեան ճնշումներուն դիմաց: Համապ եւ

ՆԱԽԱՐԱՐ ԷԼԻԱՍ ՍԵՐ...

Շարունակում Չրոյ Էջեմ

որոնք կը վերաբերին քաղաքական գործունէութեան, որովհետեւ անոնք կը պաշտպանեն քաղաքացիներու եւ կայունութիւնը կը շնորհեն երկրին: Մըր նկատելի տուաւ, որ տարբեր հարցերու շուրջ երկրին մէջ շրջան ընող քաղաքական բոլոր առաջադրանքները ենթակալ պէտք է մնան ժողովրդավարական գործելաձեւի կանոններուն, եւ ոչ մէկ պատճառով կամ պատրուակով կրնան դուրս գալ երկրի սուրբութեան կամ բանավէճի շրջագիծէն, որովհետեւ արգիլուած է ապահովական խախտումները քաղաքական աշխատանքի միջոց եւ ձեռնարկել: Ժողովին ընթացքին Մըր թելադրեց

առաւել ազոյն տնտեսական կարգի ստեղծումը: Ապա հոգովութեան Կեդրոնական խորհուրդի ժողովին ներկայ գտնուեցան ընդհանուր դատախազ Ատնան Ատտու, պիտուրական դատախազ Նարի Լախուս, բանակի իրամասնատարի ներկայացուցիչը, բանակի գաղտնի

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 4712

Table with 11 columns and 11 rows for a 4712 crossword puzzle. Some cells contain numbers indicating starting positions for words.

Table with 2 columns: ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ (Horizontal) and ՈՒՂԱՎԱՅՆԱԿԱՆ (Vertical). Lists 11 clues for the crossword puzzle.

ԹԻԻ 4711

Table with 11 columns and 11 rows for a 4711 crossword puzzle. Some cells contain numbers indicating starting positions for words.

ԱՍԵՐԻԿԱՅԱՅՈՒԹԵԱՆ...

Շարունակում Ա. Էջեմ

տուաւ, թէ դաշնակցային մակարդակի քաղաքական ուժերը աւելի մտիկ ուշադրութիւն պէտք է դարձնեն իր պահանջներուն: Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի PACI Բուէարկութեան Ծրագրի աշխատանքները լայն թափ առացած էին անցնող շաբաթներուն, որպէսզի առաւելագոյն թիւով ամերիկահայեր մասնակցին ընտրութեանց: Առ այս, կարելի էր անել Բոնկրէսի 27րդ ընտրաշրջանին մէջ, քուէարկողներուն մեծամասնութիւնը տեղեկութիւնները փոխանցելու համար:

Այս ծրագրի պատասխանատուներէն Սեւակ Ամիրեան ըսաւ, թէ աշխատանքը իր արդիւնքը տուաւ, երբ ընտրողներու սպասման շարքերը երկարեցան ընտրական կեդրոններուն առջեւ, ուր աչքառու թիւ մը կը կապմէին ամերիկահայ ընտրողները: Այս մէկը ցոյց կու տայ, որ ծրագրի լուրջ յաջողութիւն ունեցած է:

Միւս կողմէ, ամբողջ Ամերիկայի տարածքին, Հայ Դատի Յանձնախումբի զօրակցած թեկնածուներուն 35 տոկոսը յաջողեցաւ ընտրուիլ Երեքշաբթի օր, սակայն հայութեան մօտիկ մէկ-կէ աւելի քունկրէսմէներ ձախողեցան:

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան գոհուակութիւն յայտնեց, որ Յանձնախումբին զօրակցութիւնը վայելող թեկնածուներու ջախջախիչ մեծամասնութիւնը ընտրուած է:

«Մենք անհամբեր կը սպասեցք աշխատելու այս բարեկամներուն եւ 107րդ Քոնկրէսի բազմաթիւ նոր անդամներուն հետ՝ Հայկական Յեղափոխութեան անդամներուն հետ, Հայաստանի անբախտաբան եւ ապահով սահմաններու մէջ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքը պաշտպանելու ուղղութեամբ», ըսաւ ան:

Ա. Համբարեան ըսաւ, որ Յանձնախումբը աւելի քան երեք գոհ է ընտրութիւններուն ամերիկահայերու մասնակցութեան թիւին: Նիւ Եորքի մէջ, Ծերակոյտի գծով, հանրապետական ինքնակազմ իր պայքարը Հիւրի Քլինթոնի դէմ, որ չէր վայելէր Յանձնախումբի զօրակցութիւնը: Միջիկընի մէջ, ամերիկահայութեան երկարամեայ բարեկամ հանրապետական Սիմոն Էպրահամ չկրցաւ մեծամասնութիւն սպանովել:

Ներկայացուցիչներու Տան գծով, 5 թեկնածուներ, որոնք կը վայելէին Յանձնախումբին զօրակցութիւնը, ընտրուեցան: Անկախ Շիֆն, ընտրուեցան Մայք Հոնտա, Հիլար Սոլիս եւ Նորիշներ: Կորսնցնողներու շարքին էին Յանձնախումբին բարեկամ Սթիւ Քայքընտայ (Հ. Քայ.), Պրայըն Պիլպրէյ (Հ. Քայ.), Մէմ Կելտենսըն (Գ., Քրն.), եւ Ռաշ Հոյթ (Գ., Նի ճրրիլ):